ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը մերժվում է՝ Դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Անդրադառնալով հայցի ապահովման հարցին՝ Դատարանը գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Դատարանի՝ 31.08.2023թ. որոշմամբ որոշվել է հայցվորի միջնորդությունը՝ հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին, բավարարել:

Արգելել <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ին վճարել 2896986 ՀՀ դրամը որպես <<ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3» ծածկագրով պայմանագրի կատարման ապահովում և 4345479 ՀՀ դրամը՝ որպես <<ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3» ծածկագրով պայմանագրի որակավորման ապահովում:

Նման պայմաններում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով ներկայացված հայցը մերժվում է, Դատարանը գտնում է, որ կիրառված հայցի ապահովման միջոցը պետք է պահպանվի մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ՀՀ պաշտպանության նախարարության և <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի միջև 08.05.2023թ. կնքված «ՓՊՄԱՊՁԲ-23-7/29-3» ծածկագրով գնման պայմանագիրը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից միակողմանի լուծելու 04.08.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու մասին, մերժել:

Դատական ծախսերի հարցը, համարել լուծված:

Դատարանի՝ 31.08.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը պահպանել մինչև օրինական ուժի մեջ մտնելը:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ **Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ**